ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.05.2020
345-44

ՀՀ գլխավոր դատախազ
Արթուր Դավթյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Դավթյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ Ներքին և արտաքին ազդարարման դեպքերի մասին հարցմանը, ՀՀ գլխավոր դատախազությունը մայիսի 12-ին պատասխան գրությամբ տեղեկացրել էր, որ 2019 թվականի հունվարի 1-ից 2020 թվականի մայիսի 10-ը ընկած ժամանակահատվածում արտաքին ազդարարման կարգով արձանագրվել է 234 հաղորդում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

1. Քանի՞ քրեական գործ է հարուցվել վերոնշյալ հաղորդումների հիման վրա:
2. Հարուցված քրեական գործերից քանիսում են ներգրավված բարձրաստիճան պաշտոնատար անձինք:
3. Հարուցված քրեական գործերից քանիսի՞ քննությունն է ավարտվել եւ ուղարկվել դատարան:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան